ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 505 - Ա

«ՔԵՐՈԼԱՅՆ ՔՈՔՍԻ ԱՆՎԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 16,100,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վերականգնողական կենտրոնի արդիականացում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01060736) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ջի Էս Թի Փաուեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01079621) 2026 թվականի հունիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է եռաֆազ հոսանքի ինքնագործարկվող գեներատորի ձեռքբերում՝ 4,075,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Թիթան գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08265828) 2026 թվականի հունիսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերելակի՝ իր համապատասխան բոլոր սարքավորումներով և շահագործման անհրաժեշտ բոլոր պատկանելիքներով, մատակարարման աշխատանքների իրականացում՝ 12,025,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

13.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ